ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

««ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության 1994 թվականի հուլիսի 31-ի ՀՕ-115 օրենքը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԲԱԺԻՆ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ներդրումների իրականացման, խրախուսման, պաշտպանության և կառավարման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքի նպատակը

1. Սույն օրենքի նպատակը կարգավորող միջավայրի թափանցիկության և երկրի մրցունակության բարձրացման, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացման, օտարերկրյա պետությունների հետ տնտեսական համագործակցության զարգացման խթանման, ինչպես նաև օտարերկրյա ներդրողների իրավունքների, օրինական շահերի, գույքի պաշտպանության ապահովումն է:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

օտարերկրյա ներդրող՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մշտապես բնակվող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով պլանավորում է կամ իրականացրել է ներդրում Հայաստանի Հանրապետությունում.

օտարերկրյա ներդրում՝ ներդրողի սեփականություն հանդիսացող կամ ուղղակի կամ անուղղակի կերպով օտարերկրյա ներդրողի հսկողության տակ գտնվող սույն օրենքով նախատեսված ցանկացած ակտիվ, որը սույն օրենքով նախատեսված ձևերից որևէ մեկով ներդրվել է Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև ներդրումից ստացված և չհայրենադարձված եկամուտը և իրացումից ստացված գույքն ու գումարները:

օտարերկրյա ներդրումներով կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ստեղծված իրավաբանական անձ, որում որպես մասնակից հանդես է գալիս օտարերկրյա ներդրող.

ազատ փոխարկելի արտարժույթ՝ Արժույթի միջազգային հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված հասկացությունը.

Հոդված 4. Որպես օտարերկրյա ներդրում ներդրվող գույքի և իրավունքների տեսակները

1. Օտարերկրյա ներդրողները կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումներ իրականացնել հետևյալ գույքով և իրավունքներով՝

1) Հայաստանի Հանրապետության ազգային դրամով.

2) արտարժույթով, արժութային այլ արժեքներով՝ Հայաստանի Հանրապետության արժութային օրենսդրությանը համապատասխան.

3) գույքով և դրա հետ կապված գույքային ցանկացած իրավունքով.

4) բաժնետոմսերով, պարտատոմսերով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթերով՝ Հայաստանի Հանրապետության արժութային օրենսդրությանը համապատասխան.

5) դրամական և պայմանագրային արժեք ունեցող պարտավորությունների կատարման պահանջի իրավունքով՝ Հայաստանի Հանրապետության արժութային օրենսդրությանը համապատասխան.

6) մտավոր սեփականության ցանկացած իրավունքով.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված տնտեսական գործունեության իրականացման իրավունքով.

8) վճարովի ծառայություններով.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ներդրումների ցանկացած տեսակներով:

Հոդված 5. Օտարերկրյա ներդրումների իրականացման ձևերը

1. Օտարերկրյա ներդրողներն իրավունք ունեն ներդրումներ իրականացնել հետևյալ ձևերով և հետևյալ ակտիվների ձեռքբերման միջոցով.

1) օտարերկրյա ներդրողներին ամբողջությամբ պատկանող կազմակերպություններ, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձանց պատկանող ստորաբաժանումներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելու կամ գործող կազմակերպությունները որպես սեփականություն ձեռք բերելու միջոցով.

2) Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցությամբ նոր կազմակերպություններ հիմնադրելու կամ գործող կազմակերպություններում բաժնեմաս ձեռք բերելու միջոցով.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում բաժնետոմսեր, պարտատոմսեր և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ արժեթղթեր ձեռք բերելու միջոցով.

4) Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կամ իրավաբանական անձանց փոխառության, վարկի, լիզինգի կամ այլ պայմանագրերի հիման վրա դրամական միջոցներ կամ գույք տրամադրելու միջոցով.

5) ինքնուրույն կամ այլ անձանց մասնակցությամբ ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու միջոցով.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված գույքային այլ իրավունքներ ձեռք բերելու միջոցով.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով:

ԲԱԺԻՆ 2

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 6. Ազգային ռեժիմը

1. Հայաստանի Հանրապետությունը ներդրումների ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, իրականացման, կառավարման, պաշտպանության և ներդրումներին վերաբերող այլ հարցերում օտարերկրյա ներդրողների և օտարերկրյա ներդրումների նկատմամբ սահմանում է ոչ պակաս նպաստավոր ռեժիմ, քան նույնանման իրավիճակներում սահմանում է տեղացի ներդրողների և ներդրումների համար, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Հայաստանի Հանրապետության օրենքներով կարող են սահմանվել այն տարածքները և ոլորտները, որտեղ օտարերկրյա ներդրողների և օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների գործունեությունը սահմանափակվում կամ արգելվում է:

Հոդված 7. Առավել բարենպաստ ռեժիմը

1. Հայաստանի Հանրապետությունը ներդրումների ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, իրականացման, կառավարման, պաշտպանության և ներդրումներին վերաբերող այլ հարցերում օտարերկրյա ներդրողի և օտարերկրյա ներդրումի նկատմամբ սահմանում է ոչ պակաս նպաստավոր ռեժիմ, քան նույնանման իրավիճակներում սահմանում է ցանկացած այլ երկրի ներդրողի և ներդրումի համար:

Հոդված 8. Արդար և հավասար վերաբերմունքի սկզբունքը և նվազագույն ստանդարտը

1. Հայաստանի Հանրպետությունում օտարերկրյա ներդրողները և/կամ օտարերկրյա ներդրումները պաշտպանվում են արդար և հավասար (ներառյալ՝ ամբողջական պաշտպանություն և անվտանգություն) վերաբերմունքով և նվազագույն ստանդարտներով: Արդար և հավասար վերաբերմունքն օտարերկրյա ներդրողին և/կամ օտարերկրյա ներդրմանը տալիս է նվազագույն ստանդարտից առավել պաշտպանություն:

Արդար և հավասար վերաբերմունքը ներառում է հետևյալ բաղադրիչները՝

1) ներդրողների օրինական, օբյեկտիվ և խելամիտ սպասելիքների (ակնկալիքների) հարգումը, որը հավասարակշռվում է պետության կողմից կարգավորվող հանրային շահերի հետ.

2) արդարադատության մատչելիության և հիմնարար արդարադատության ապահովումը.

3) օտարերկրյա ներդրողների և նրանց ներդրումների նկատմամբ խտրականության արգելքը՝ կախված սեռից, ռասայից, , սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելիությունից, գույքային վիճակից, ծննդավայրից հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից.

4) հանրային իշխանությունը չարաշահելու և հակահիրավական, հակաօրինական ճնշումների բացառումը.

5) ոչ իրավաչափ վարչարարության՝ վարչական մարմինների օրենքից չբխող կամ օրենքին հակասող գործողությունների և անգործության արգելքը:

2. Նախքան օտարերկրյա ներդրողների գործունեությանն ուղղակիորեն առնչվող օրենսդրական փոփոխություն կատարելը, ինչը կարող է ազդել օտարերկրյա ներդրումների վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարերկրյա ներդրողների մասնակցությամբ անցկացվում են հանրային քննարկումներ:

3. Օտարերկրյա ներդրումների իրականացման արգելումը կամ սահմանափակումը կարող է կատարվել միայն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:

4. Նվազագույն ստանդարտը՝ որպես միջազգային սովորութային իրավունք, մեկնաբանվում է միջազգային իրավունքում ձևավորված պրակտիկային համապատասխան:

5. Եթե Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերում արդար և հավասար (ներառյալ՝ ամբողջական պաշտպանություն և անվտանգություն) վերաբերմունքն ավելի նվազ պաշտպանություն է ապահովում, քան սույն օրենքով սահմանվածը, ապա օտարերկրյա ներդրողի ցանկությամբ նրան կարող է տրամադրվել սույն օրենքով սահմանված արդար և հավասար վերաբերմունքը:

Հոդված 9. Օրենքի կայունությունը

1. Սույն օրենքի ցանկացած փոփոխության դեպքում օտարերկրյա ներդրողն այդպիսի փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում, գրավոր տեղեկացնելով

Հայաստանի Հանրապետության կառավարությանը, կշարունակի իր ներդրման ողջ ընթացքում օգտվել ներդրման պահին գործող օրենքով տրամադրված երաշխիքներից և իրավունքներից:

Հոդված 10. Ներդրման առգրավման արգելքն ու փոխհատուցումը

1. Հայաստանի Հանրապետությունում արգելվում է օտարերկրյա ներդրումների առգրավումը, հարկադիր օտարումը կամ անուղղակի առգրավումը, բացառությամբ՝ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի՝ նույն օրենքով նախա-տեսված երաշխիքների ապահովմամբ:

2. Առգրավման դեպքում փոխհատուցումը պետք է վճարվի ազատ փոխարկելի արտարժույթով և օտարերկրյա ներդրողի ցանկությամբ կարող է ազատորեն փոխանցվել Հայաստանի Հանրապետության տարածքից օտարերկրյա ներդրողի պետության տարածք:

Հոդված 11. Վնասի հատուցման երաշխիքը

1. Օտարերկրյա ներդրողներն իրավունք ունեն դատական կարգով ստանալու փոխհատուցում Հայաստանի Հանրապետության վարչական մարմինների կամ վերջիններիս պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով, ինչպես նաև այդ մարմինների և պաշտոնատար անձանց կողմից օտարերկրյա ներդրողների կամ օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների հանդեպ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով հասցված նյութական և բարոյական վնասների, այդ թվում՝ բաց թողնված օգուտի համար:

2. Սույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված փոխհատուցման գումարները ենթակա են փոխհատուցման տվյալ ֆինանսական տարվա ընթացքում ընթացիկ շուկայական գներով անկախ փորձագետի կողմից հաշվարկված արժեքով: Այդ փոխհատուցումը վճարվում է այն արժույթով, որով կատարվել է ներդրումը կամ ազատ փոխարկելի արժույթով: Արտարժույթի հաշվարկումը Հայաստանի Հանրապետության ազգային դրամով իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժույթի նկատմամբ ներդրման պահին Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից ոչ բարձր:

3. Փոխհատուցման իրավունքի առաջացման պահից մինչև հատուցման վճարումը փոխհատուցման գումարի նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ՝ վճարման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքով, իսկ եթե այլ օրենքներով կամ պայմանագրով նախատեսված է ավելի բարձր տոկոսադրույք, ապա՝ այդ տոկոսադրույքներով:

Հոդված 12. Օտարերկրյա ներդրողի շահույթի և այլ միջոցների տնօրինումը

1. Օտարերկրյա ներդրումներով կազմակերպության շահույթը (եկամուտը) հարկումից հետո մնում է նրա տնօրինության տակ:

2. Օտարերկրյա ներդրողներն իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության բանկերում բացելու ընթացիկ, հաշվարկային կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ հաշիվներ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Օտարերկրյա ներդրողներն իրավունք ունեն իրենց դրամական և այլ միջոցներն օգտագործել Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում՝ հաշվի առնելով առկա օրենսդրական ընդհանուր կարգավորումներն ու սահմանափակումները:

Հոդված 13. Միջոցների արտահանումը

1. Օտարերկրյա ներդրողն իրավունք ունի օտարերկրյա ներդրումը, գույքը և այլ միջոցներն անմիջապես և ազատորեն արտահանել Հայասանի Հանրապետության տարածքից: Այդպիսի ներդրումը, գույքը և այլ միջոցները ներառում են կանոնադրական կապիտալում ներդրումները, շահույթը, շահաբաժինները, գույքի գնի հավելաճը և ներդրման կամ դրա մի մասի վաճառքից կամ ներդրման ամբողջական կամ մասնակի լուծարումից գոյացած եկամուտը (փոխհատուցումը), տոկոսները, որպես ռոյալթի ստացված վճարները, կառավարման վճարները և տեխնիկական աջակցության գումարները, պայմանագրերի, այդ թվում՝ նաև փոխառության պայմանագրերի շրջանակներում կա-տարվող վճարները, վեճերից ծագող վճարները, հասարակության և պետական կարիքների

համար գույքի օտարումից առաջացող գումարները, աշխատանքների, ծառայությունների դիմաց կատարվող վճարները:

2. Օտարերկրյա ներդրողն իրավունք ունի սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված ներդրումն արտահանել արտարժույթով՝ հաշվարկված փոխանցման պահին փոխանակման շուկայում գործող փոխարժեքով:

3. Օտարերկրյա ներդրողն իրավունք ունի սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված ներդրումն արտահանել բնեղենով, եթե ներդրման պահին գործող օրենքով նախատեսված չեն եղել նշված ապրանքների արտահանման սահմանափակումներ և որոնք գործում են արտահանման պահին:

4. Անկախ սույն հոդվածի 1-3 մասերի՝ Հայաստանի Հանրապետությունը կարող է սահմանափակել ներդրման արտահանումն իր հետևյալ հարցերը կարգավորող օրենքների ոչ խտրական և բարեխիղճ կիրառման արդյունքում՝ սնանկության, անվճարունակության և պարտատերերի իրավունքների իրականացումը կարգավորող օրենքներ, ֆինանսական գործիքների, ներառյալ՝ արժեթղթերի և պարտատոմսերի թողարկումը, բաժանորդագրումը և վաճառքը կարգավորող օրենքներ, քրեական կամ վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքներ, ֆինանսական ոլորտը կարգավորող մարմիններին հաշվետվությունների տրամադրումը և տեղեկատվության պահպանումը կարգավորող օրենքներ, դատավարության կամ վարչական վարույթի ժամանակ որոշումների, վճիռների և այլ հանրային իրավական ակտերի կատարումը կարգավորող օրենքներ: Ֆինանսական համակարգի կայունության պահպանման, հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, տնտեսական ռիսկերի կանխարգելման կամ վիճակագրական նպատակներով օրենքով կարող են սահմանվել կապիտալի շարժի և ֆինանսական արժութային գործարքների իրականացման համար կոնկրետ կարգ և պայմաններ:

ԲԱԺԻՆ 3

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 14. Օտարերկրյա ներդրումներով կազմակերպության գործունեության շրջանակները

1. Օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունները կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված ցանկացած տեսակի տնտեսական գործունեություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Հոդված 15. Արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների արտահանումն ու ներմուծումը

1. Օտարերկրյա ներդրումներով կազմակերպություններն իրավունք ունեն առանց հավելյալ թույլտվության արտահանել սեփական արտադրության արտադրանքը, աշխատանքները, ծառայությունները և ներմուծել սեփական կարիքների համար արտադրանք, աշխատանքներ, ծառայություններ, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով:

2. Արտահանվող արտադրանքը, աշխատանքները, ծառայությունները որպես սեփական արտադրանք ճանաչելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 16. Օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների հարկումը

1. Օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունները հարկեր են վճարում և հարկային արտոնություններ ստանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Հոդված 17. Օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների արտոնությունների սահմանումը

1. Հաշվեկշռային գնահատման և հաշվառման նպատակով օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունն իրականացնում է օտարերկրյա արժույթի վերահաշվարկ Հայաստանի Հանրապետության դրամի այն փոխարժեքով, որը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքով:

2. Օտարերկրյա կազմակերպությունները կարող են օգտվել «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավունքներից, այդ թվում՝ դիմել Հայաստանի Հանրապետության կառավարություն ազատ տնտեսական գոտի հիմնելու նպատակով:

3. Օտարերկրյա ներդրումների խրախուսման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվում և իրականացվում է համապատասխան պետական ծրագիր: Պետական ծրագրի մշակման և իրականացման կարգը և ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է լիազոր մարմին, որն իրավասու է աջակցել օտարերկրյա ներդրողներին ներդրումների իրականացման հետ կապված հարցերում, ներառյալ՝ սույն օրենքով և այլ օրենքներով նախատեսված արտոնություններից և երաշխիքներից օգտվելու հետ կապված հարցերում:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանմամբ, իրավասու է տնտեսության առանձին ոլորտներում և առանձին տարածքներում կատարվող ներդրումների համար սահմանել արտոնություններ, ներառյալ՝ հողի անհատույց տրամադրում, վարկի տոկոսների սուբսիդավորում, արտադրանքի երաշխավորված ձեռքբերում, պետական երաշխիքների տրամադրում, վարչարարության պարզեցում և այլն:

6. Ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատվում են երրորդ երկրներից Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) այն ապրանքները, որոնք ներմուծվում են որպես օտարերկրյա հիմնադրի ներդրում կանոնադրական (պահուստային) կապիտալում (ֆոնդում)՝ այդ կապիտալի (ֆոնդի) ձևավորման համար հիմնադիր փաստաթղթերում նախատեսված ժամկետների սահմաններում: Այդպիսի ապրանքների դեպքում սակագնային արտոնությունների կիրառման կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

Հոդված 18. Վեճերի լուծման կարգը

1. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումների հետ կապված բոլոր վեճերը Կողմերի միջև հնարավորության դեպքում կարգավորվում են բանակցությունների, խորհրդակցությունների կամ հաշտարարության միջոցով:

2. Օտարերկրյա ներդրողներն առկա վեճերը կարգավորելու և իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրված բոլոր միջոցներից, ինչպես նաև վեճերի լուծման համար միջազգային մասնավոր իրավունքով սահմանված միջոցներից:

3. Օտարերկրյա ներդրումների հետ կապված բոլոր վեճերը, որոնք ծագել են օտարերկրյա ներդրողի և Հայաստանի Հանրապետության միջև, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի և քաղաքացիական դատարանի իրավասության վեճերը, քննվում են Հայաստանի Հանրապետության դատարաններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամ արբիտրաժային դատարանում օտարերկրյա ներդրողի ցանկությամբ՝ հետևյալ պայմանների պահպանմամբ՝

1) Որպես արբիտրաժային դատարան հանդես է գալիս Միջազգային առևտրաարդյունաբերական պալատին կից գործող արբիտրաժային դատարանը կամ Համաշխարհային բանկի միջազգային ներդրումային վեճերի լուծման կենտրոնը (ICSID) կամ Հայաստանի Հանրապետությունում մշտապես գործող որևէ արբիտրաժային կենտրոնը կամ կոնկրետ այդ վեճի լուծման համար ձևավորված (ad hoc) արբիտրաժը, որը կգործի սույն մասի 3)-րդ կետով նախատեսված կանոններով,

2) Արբիտրաժային դատավարության լեզուն, ըստ ներդրողի ընտրության, հայերենն է կամ անգլերենը, եթե այլ լեզվի մասին առանձին համաձայնության չգան Հայաստանի Հանրապետությունը և ներդրողը, ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին ընդդատյա գործերով արբիտրաժային դատավարության լեզուն կլինի հայերենը:

3) Արբիտրաժի կանոնները կլինեն Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի /UNCITRAL/ գործող խմբագրությամբ կամ Միջազգային առևտրաարդյունաբերական պալատին /ICC/ կից գործող արբիտրաժային դատարանի կամ Համաշխարհային Բանկի միջազգային ներդրումային վեճերի լուծման կենտրոնի /ICSID/ կամ Հայաստանի Հանրապետությունում գործող մշտական արբիտրաժային որևէ կենտրոնի կանոնները:

4. Հայաստանի Հանրապետությունն ընդունում է սույն օրենքով սահմանված պայմաններին համապատասխանող ցանկացած արբիտրաժի իրավազորությունը,

ներառյալ՝ արբիտրաժի որոշման հարկադիր կատարման հետ կապված հարցերում, պարտավորվում է կատարել նշված արբիտրաժի որոշումը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Հոդված 19. Օտարերկյա ներդրումների իրավական կարգավորումը

1. Եթե Հայաստանի Հանրապետության կնքած միջազգային պայմանագրերի դրույթներով սահմանված է առավել բարենպաստ կարգավիճակ, քան սույն օրենքով, ապա համապատասխան դեպքերում գործում են միջազգային պայմանագրերի դրույթները:

ԲԱԺԻՆ 4
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 20. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 1994 թ. հուլիսի 31-ի «Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-115 օրենքը:

3. Սույն օրենքը կիրառվում է իր ուժի մեջ մտնելու պահին գործող և դրանից հետո իրականացված օտարերկրյա ներդրումների նկատմամբ:

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն իրականացված ներդրումների մասով օտարերկրյա ներդրողի ընտրությամբ հինգ տարվա ընթացքում կարող է կիրառվել 1994 թ. հուլիսի 31-ի «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՕ-115 օրենքի դրույթները, ինչի մասին սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից երկու ամսվա ընթացքում օտարերկրյա ներդրողը կամ օտարերկրյա ներդրմամբ կազմակերպությունը գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ **Ս. Սարգսյան**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը (սույն հոդվածում այսուհետ՝ ներդրող) ակտը կարող են բողոքարկել նաև արբիտրաժային դատարանում:

Հոդված 2. Սույն օրենքի 70-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Ներդրողի ցանկությամբ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում նախատեսված ժամկետների պահպանմամբ վարչական մարմինների գործողությունների, անգործությունների կամ ընդունված վարչական ակտերի իրավաչափությունը կարող է բողոքարկվել արբիտրաժային դատարանում՝ հետևյալ պայմանների պահպանմամբ.

1) Որպես արբիտրաժային դատարան հանդես է գալիս Միջազգային առևտրաարդյունաբերական պալատին կից գործող արբիտրաժային դատարանը կամ Հայաստանի Հանրապետությունում մշտապես գործող որևէ արբիտրաժային կենտրոնը կամ կոնկրետ այդ վեճի լուծման համար ձևավորված (ad hoc) արբիտրաժը, որը կգործի սույն մասի 3)-րդ կետով նախատեսված կանոններով,

2) Արբիտրաժային դատավարության լեզուն, ըստ ներդրողի ընտրության, հայերենն է, կամ ռուսերենը, կամ անգլերենը, եթե այլ լեզվի մասին առանձին համաձայնության չգան համապատասխան վարչական մարմինը և ներդրողը,

3) Արբիտրաժի կանոնները կլինեն Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի /UNCITRAL/ գործող խմբագրությամբ կամ Միջազգային առևտրաարդյունաբերական պալատին /ICC/ կից գործող

արբիտրաժային դատարանի կամ Հայաստանի Հանրապետությունում գործող մշտական արբիտրաժային որևէ կենտրոնի կամ ներդրողի և վարչական մարմնի կողմից համաձայնեցված այլ կանոնները:

4) Հայաստանի Հանրապետությունն ընդունում է սույն օրենքով սահմանված պայմաններին համապատասխանող ցանկացած արբիտրաժի իրավազորությունը, պարտավորվում է կատարել նշված արբիտրաժի որոշումը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-55-Ն օրենքի 2-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետում «առևտրային բնույթի բոլոր վեճերը» բառերից հետո լրացնել «ինչպես նաև առևտրային իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից վարչական մարմինների գործողությունների և անգործության և վարչական ակտերի բողոքարկումը:» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
««ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Անհրաժեշտությունը

«Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն (այսուհետ՝ գործող օրենք) ընդունվել է 1994 թվականին, ինչից հետո չի ենթարկվել էական փոփոխությունների: 1994 թվականի դրությամբ օրենքը եղել է ընդհանուր առմամբ առաջադեմ և համապատասխանել է միջազգային լավագույն փորձին:

Հաշվի առնելով նշված ժամանակից ի վեր տեղի ունեցած մի շարք զարգացումներ, մասնավորապես՝ ընդունվել է ՀՀ Սահմանադրությունը, որը երկու անգամ բարեփոխվել է, փոփոխվել են օտարերկրյա ներդրումների խրախուսման և պաշտպանության մեխանիզմները, Հայաստանն ինտեգրվել է մի շարք միջազգային տնտեսական ինտեգրացիոն միավորումներին, կնքվել են մի քանի տասնյակ երկկողմանի և տարածաշրջանային միջազգային պայմանագրեր, անհրաժեշտություն է առաջացել վերանայել գործող օրենքը՝ նպատակ ունենալով համապատասխանեցնել այն միջազգային լավագույն փորձին, ինչը հնարավորություն կտա բարելավել Հայաստանում ներդրումային միջավայրը և ներգրավել նոր ներդրումներ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Միջազգային լավագույն փորձը ցույց է տալիս, որ ներդրումների խթանման տեսանկյունից հատկապես կարևորվում են ներդրումների պաշտպանությունը (մեխանիզմներ, ռեժիմներ և այլն), ներդրումների մուտքի հետ կապված հարցերը (սահմանափակումներ, ընթացակարգեր և այլն) և ներդրողների հետ հետագա աշխատանքը (հետներդրումային ծառայությունների մատուցում):

Ներդրումների պաշտպանությանը վերաբերող ժամանակակից ներդրումային ռեժիմների լավագույն փորձը ցույց է տալիս, որ այն ներառում է խտրականության բացառումը, ազգային ռեժիմը, առավել բարենպաստ ռեժիմը, արդար և հավասար վերաբերմունքը, տարադրամի փոխարկելիություն և տեղափոխումը, ազգայնացումից պաշտպանությունը,

վեճերի լուծման ընթացակարգերը, մասնավորապես՝ արբիտրաժ դիմելու հնարավորությունը:

Գործող օրենքում վերոնշյալ երաշխիքներից միջազգային լավագույն փորձին ամբողջությամբ համապատասխանում է միայն ազգային ռեժիմը, ինչպես նաև որոշակի բացթողումներով՝ տարադրամի փոխարկելիության և արտահանման և ազգայնացումից պաշտպանության երաշխիքները: Ընդ որում՝ վերջին երկու երաշխիքների ձևակերպումները գործող օրենքում միանշանակ և հստակ չեն:

Առավել բարենպաստ ռեժիմը, արդար և հավասար վերաբերմունքի ռեժիմը, ինչպես նաև արբիտրաժ դիմելու հնարավորությունը գործող օրենքում բացակայում են: Նշված երաշխիքներն առկա են մի շարք երկրների հետ կնքված ներդրումների փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրերում, սակայն դրանց միջև կան նաև տարբերություններ:

Ընդ որում՝ հարկ է նշել, որ վերոնշյալ երաշխիքների մի մասն առկա են ՀՀ օրենսդրության մեջ (ՀՀ Սահմանադրություն և այլ օրենքներ), սակայն դրանց բացակայությունը համապատասխան օրենքում առաջացնում է հավելյալ բարդություններ օտարերկրյա ներդրողների համար:

Գործող օրենքով նախատեսված չեն նաև հետներդրումային սպասարկման հետ կապված դրույթներ, մինչդեռ ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել է մի կառույց, որն իրավասու է աջակցել օտարերկրյա ներդրողներին ներդրումների իրականացման հետ կապված հարցերում:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Սույն նախագիծը համահունչ է Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի, ՀՀ կառավարության գործունեության ծրագրի, ինչպես նաև ՀՀ կառավարության հավանությանն արժանացած Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգի գերակայություններին:

4. Առաջարկվող կարգավորման նպատակը և բնույթը

««Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն (այսուհետ՝ Նախագիծ) ուղղված է ներդրումային ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի կատարելագործմանը՝ օտարերկրյա ներդրումների ներգրավման, պաշտպանության և հետներդրումային գործունեության հետ կապված տարաբնույթ խնդիրների լուծման միջոցով:

Միաժամանակ Նախագծով հստակեցվում են առկա սահմանումները, կատարվում են լրացումներ, տրամադրվում են լրացուցիչ արտոնություններ, ամրագրվում են ներդրողների պաշտպանության նոր երաշխիքներ, սահմանվում է վեճերի լուծման նոր մեխանիզմ:

Մասնավորապես՝ Նախագիծը հստակեցրել է «օտարերկրյա ներդրում» հասկացության սահմանումը՝ հիմք ընդունելով պորտֆելային ներդրումներն ու փոխառու միջոցները, չհայրենադարձված եկամուտն ու իրացումից ստացված գույքը և գումարները:

Նախագծով ներդրվում է առավել բարենպաստ և ազգային ռեժիմներն ամբողջ ծավալով, ինչպես նաև արդար և հավասար վերաբերմունքի սկզբունքը և ներդրումների պաշտպանության նվազագույն ստանդարտները:

Հստակեցվել և գործող օրենսդրությանը համահունչ է դարձվել առգրավման և ազգայնացման հետ կապված ռիսկերը (արգելքը և երաշխիքները), ինչպես նաև ներդրումների խրախուսման հետ կապված որոշ դրույթներ (օրինակ՝ հողի անհատույց տրամադրում, վարկի տոկոսների սուբսիդավորում, արտադրանքի երաշխավորված ձեռքբերում, պետական երաշխիքների տրամադրում, վարչարարության պարզեցում և այլ միջոցառումներ):

Նախատեսվել է նաև պետության հետ առկա վեճերի լուծման ժամանակ այլընտրանքային միջոցների (արբիտրաժի) կիրառման հնարավորություն:

Առաջին փուլով շեշտը հիմնականում դրվում է օտարերկրյա ներդրողների պաշտպանության և երաշխիքների վրա, իսկ արտոնությունների փաթեթը կմշակվի երկրորդ փուլով՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձն առ այն, որ արտոնությունները, այդ թվում՝ հարկային, մաքսային և այլն, պետք է ընդգրկվեն համապատասխան օրենքներում, ոչ թե ընդհանուր օրենքում:

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն բնագավառում տրվող կարգավորման ազդեցության գնահատման եզրակացության՝ Նախագիծն իր մեջ որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Բնապահպանության, առողջապահության, ինչպես նաև բյուջետային բնագավառներում Նախագծերի ընդունման և կիրարկման ազդեցությունը գնահատվում է ***չեզոք***, իսկ մրցակցության միջավայրի, սոցիալական պաշտպանության ու գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***դրական ազդեցություն:***

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիա, այլ դոնոր կազմակերպություններ, գործարար համայնք, այլ շահագրգիռ մարմիններ:

6. Ակնկալվող արդյունքը

ՀՀ-ում ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորում, կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացում, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացում, ներդրումների առավել պաշտպանվածություն, ներկայիս մարտահրավերներին, կնքված մի շարք երկկողմ պայմանագրերին և միջազգային տնտեսական ինտեգրացիոն միավորումների իրավական դաշտին համապատասխանություն:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման կապակցությամբ անհրաժեշտ է համապատասխան լրացումներ կատարել «Առևտրային արբիտրաժի մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ

««Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի կամ եկամուտների ավելացում կամ նվազում չի նախատեսվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ